խօնջանավ։ Հասակավորները շալվարի ներքևի ծայրերը թողնում էին բաց։ Երիտասարդները կապում էին դրլօղալթիավ։

5. Զուխան շալ կտորից էր լինում, մուգ գույնի— սև, մուգ շագանակագույն, սակավ մուգ կապտավուն. շուրջը բոլոր եզրերին նույնպես բրդե դայթան կարած։ Երկար, հասնում էր դրբանից՝ տապանից մի 8 սմ վեր։

6. Կöտին հաճախ թոխկա՝ կաշվե գոտի էր լինում, արծաթե զարդերի միջից անցկացրած կամ զարդերը վրայից կարած[14]։ Սակայն հասակավորները՝ անէլնէրը, փաթաթում էին գոտկատեղով 3 մետր երկարություն ունեցող շափաղի դանավöիզ։ Այս սովորությունը եկած պիտի լինի արևմտյան հայերից։

7. Փափախ։ Տեղական տարազն էր՝ «мода»-ն—ադաթը, լայն, գնդակաձևը, ոչխարի փարթամ մազոտ մորթուց։ Հարուստներն աշխատում էին զանազանվել բուխարի, մրդայի, էֆը բիզ՝ բարձր փափախավ։

8. Կöլպան կանացի կöլպայից բարձր ճիթֆէրավ էր և ավելի պարզ նախշերով։

9. Հէսկի կամ դօլաղալթի, դլօղալթի։ Թե՛ ջանէլ և թե՛ անէլ— թե՛ երիտասարդ և թե՛ ծեր, միշտ սև գույնի բամբակե, սակավ բրդե, գործվածք, լայնությունը 10—12 սմ, երկարությունը 1 և ավելի մետր, փաթաթում էին կöլպայի ճտին, երիտասարդները մեջն առնելով փոխանի և շալվարի ծայրերը։

10. Ոտնաման։ Հին տեղական ոտնաման էր տրէխը, չարուխը, որը կարում էր ամեն տղամարդ իր ոտքին համեմատ՝ ինքը, տանը մշակած եզան, գոմշի, խոզի և այլն կաշուց։ Ոտքին հագնելուց հետո տրէխը կապում էին ֆրդէրավ՝ երկար տրրխէտանավ. տրրխէտանի մի ծայրը ամրացված էր տրէխի ֆթին՝ ծայրին, մյուս ազատ ծայրը անց էր կացվում տրէխի մատէրավ՝ փոկից հյուսված անցքերով, շատ խիտ, այնպես, որ տրրխէտանի զոլերը կպչում են իրար և ծածկում են ոտքի թաթի մակերեսը։ Ապա տրրխէտանի ազատ ծայրը շարունակում էին անցկացնել տրէխի փոկե ականջներով, որոնցից երկուսը կարվում էին տրէխի մարէրի կողքին աջ ու ձախ, իսկ երկուսը՝ ետևից կրնկի կենտրոնից աջ ու ձախ։ Տրրխէտանի ազատ ծայրն անց էին կացնում ականջների միջով, խաչաձև՝ առջևից դեպի ետևի ականջը, ապա կրնկի այդ ականջից դեպի մյուս ականջը, հետո բերում՝ խաչաձև առջևի ականջով, այնուհետև անցկացնում ետևի ականջով, բերում առջևի երկրորդ ականջը։ Դրանից հետո տրրխէտանի ազատ մնացած մասը փաթաթում էին ոտքին և կապում։ Տրէխը հյուսվում էր մեկ կամ երեֆֆքանի՝ ծայրի մասը ծալվում էր երեք ծալքով։ Տրրխէտանը հյուսված էր սովորական բամբակի թելից, տափակ էր և ներկված՝ գերազանցապես կարմիր՝ երիտասարդների համար, նաև սև՝ ծերերի համար։

Թե՛ տղամարդ և թե՛ կին հագնում էին, այժմ գրեթե մոռացված, չմօշկ. տղամարդը՝ սև, կինը՝ գունավոր, սիրած գույնը՝ կարմիր կամ կանաչ, սաղր՝ բծերով երեսը ասեղնագործած, քիթը սուր ու վեր ցցված—տղամարդունը՝ ավելի, կնոջը՝ պակաս։ Տղամարդու չմօշկի դրբանը՝ տապանը, ավելի կլոր, կնոջը, ձվաձև երկարացրած։ Դրբանի ետևի մասը տակից մինչև կեսը նալ-

[14] Հայ տղամարդը հնարավորության չափ աշխատում էր ունենալ թանկարժեք գոտի, մտածելով, որ այն կարող է պետք գալ իր թաղման ծախսերը ծածկելու համար կամ ծայրահեղ դեպքում՝ սև օրվա հոգսը քաշելու համար։